

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐԴԻ ՖԱԼԻԿ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՏԻՊԵՐՆ ՈՒ ԾԻՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Ա. Վ. ԳՆՈՒՆԻ

Ֆալատիպ հուշարձանները և պատկերները հիմ աշխարհի կարևորագույն պաշտամունքային օբյեկտներից էին, որոնք խորհրդանշում էին պտղաբերությունը և սերնդի շարունակելիությունը: Հայկական լեոնաշխարհում ֆալատիպ պատկերները երևան են գալիս հնագույն ժամանակներից՝ ինչպես ինքնուրույն, այնպես էլ որպես այլ կերտվածքների բաղադրատարրեր: Ըստ Հ. Աճառյանի՝ «ֆալոս» բառը ծագել է հնդեվրոպական «bhel» (ուռել) արմատից, որից սերել են բազմաթիվ բառեր, այդ թվում՝ հայերենի «բլուր», «պուղոզ» և այլ բառեր: Բացի այդ՝ հայերենում օգտագործելի է «փաղղոս» բառը, որը փոխառված է հունարենից և հանդիպում է դեռևս V դարից Սուրբ Գրքի հայերեն թարգմանության մեջ՝:

Հայկական լեոնաշխարհի ֆալանման կերտվածքների հիմնական տիպերը: Տիպաբանորեն ֆալատիպ կերտվածքները կարելի է բաժանել մի քանի խմբերի. 1) ֆալանման կերտվածքներ՝ ֆալոսներ, մենհիրներ, պյուներ, 2) ֆալիկ տարրեր ծիսական և կենցաղային իրերում և կերտվածքներում (օջախների ֆալիկ ելուստներ, պրիզմաձև և գլանաձև հեռակներ, ծխամաններ, զարդեր, աղ. 1, նկ. 2, 3, 4, 6)¹: 3) Ընդգծված ֆալիկ էլեմենտներ մարդակերպ և կենդանակերպ արձաններում. ընդգծված ֆալերով մարդակերպ և կենդանակերպ էակների արձանիկներ (Օենգավիթ, Պառավաքար, Ստեփանծմիհդայի, Շիրակավանի և Լոռի բերդի կոմպոզիցիաներ և այլն, աղ. 1, նկ. 1, 7)², ֆալանման ելուստներ շենգավիթյան մշակույթի մարդակերպ և կենդանակերպ օջախային հեռակներում (Օենգավիթ, Մոխրաբլուր, Ամիրանիս-Գորա, Սոս Հոյուր և այլն, աղ. 1, նկ. 5)³, ֆալիկ տղամարդկանց և կենդանակերպ էակների պատկերներ կենցաղային և ծիսական իրերի վրա, գոտիներ (Սևան, Լճաշեն, Նոյեմբերյան, Աստղի բլուր, Մուսիերի, Խրտանոց)⁴, խեցեղեն (Դվին)⁵, ժայռապատկերների վրա⁶: Ֆալատիպ ելուստով է ավարտվում նաև Մեծամորի կուռքը՝:

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Եր., 1979, էջ 474, ինչպես նաև Նոր բառգիրք Հայկազեն լեզուի, հ. 2, Եր., 1981, էջ 927:

² Տե՛ս Ե. Լալայան, Պամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Եր., 1931, էջ 151, նկ. 93, Գ. Ս. Хачатрян, Древняя культура Ширака. Ер., 1974, էջ 71, Գ. Н. Чубинишвили, К Древней истории Южного Кавказа. Тб., 1971, էջ 92, աղ. XXII (4). Эпоха бронзы Кавказа и Средней Азии. Ранняя и Средняя бронза Кавказа. М., 1994, աղ. 2 (23), Ս. Դևեջյան, Ոսկե զարդերի հմայական-պաշտամունքային էությունը մ.թ.ա. II-I հազ. (ըստ Լոռի-բերդի նյութերի), «Հին Հայաստանի ոսկին», Եր., 1997, էջ 8:

³ Տե՛ս Ս. Եսայան, Հին Հայաստանի մարդակերպ արձանիկները, «Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 1987, № 1, էջ 128, *ճուլիճի* Скульптура древней Армении. Ер., 1980, էջ 37, աղ. LVI-LVII, *ճուլիճի* Древняя культура племен северо-восточной Армении. Ер., 1976, էջ 239, աղ. 146 (2), Մ. Թորոպյան, Օ. Ս. Խճկիկյան, Լ. Ա. Պետրոպյան, Հին Շիրակավան, Եր., 2002, էջ 40-41, աղ. XXIV (1), Ս. Դևեջյան, Լոռի-Բերդի քրմի դամբարանը, ՊԲՀ, 1986, № 3, էջ 310-312:

⁴ Տե՛ս Ս. Ա. Есаян, Скульптура..., աղ. IX. X (1-3), XVI (9), А. G. Sagona, Social identity and religious ritual in the Kura-Araxes cultural complex: some observations from Sos hoyuk, Mediterranean Archaeology. vol 11 1998, էջ 14 (5), Գ. Н. Чубинишвили, նշվ. աշխ., XXII (4), Ս. Հ. Սարգսյան, Նախադարձային հասարակությունը Հայաստանում, Եր., 1967, աղ. XLIX (6):

⁵ Տե՛ս Ս. Ա. Есаян, Древняя культура..., էջ 244-245, *ճուլիճի* Gürtelbleche der älteren Eisenzeit in Armenien. Beiträge zur allgemeinen und vergleichenden archäologie. Bd. 6 München, 1985, S. 112-116, 162-163, 166-169, Abb. 11 (39), 13 (42-43), 14 (45, 48a):

⁶ Տե՛ս Կ. Խ. Кушмарова, Древнейшие памятники Двина, Ер., 1976, էջ 71:

⁷ Տե՛ս Հ. Մարտիրոսյան, Հ. Իսրայելյան, Գեղամա լեռան ժայռապատկերները, աղ. 254, 312, 317, 321-322, Ս. Հ. Սարգսյան, նշվ. աշխ., աղ. XXII, XXXV, նկ. 25:

⁸ Տե՛ս Է. Խանգաղյան, Կ. Միրոսյան, Է. Պարսյան, Մեծամոր, Եր., 1973, էջ 135-137, Ս. Ա. Есаян, Скульптура..., էջ 50:

4) Ֆալանսյան պատկերներ ժայռերին (Ախալքալաքի Մորճախեթ գյուղի մատույցներ, Գանձա (Ջավախք), Մեղրու շրջանի Կարճևան գյուղի մոտ, Վասպուրականում Արտամենի ձորի լանջին, Ծանկազ գյուղ (աղ. 2, ԱՎ. 7)⁸: 5) Ֆալիկ պաշտամունքի առարկա հանդիսացող քարեր և ժայռաքեկորներ (Ջանգեզուր, Քաշաթաղ, Կարս և այլն)⁹:

Ֆալիկ հուշարձանները ըստ տեղադրության: Հնավայրերում ֆալիկ հուշարձանները հայտնաբերված են ինչպես բնակատեղիներում, այնպես էլ դամբարաններում: Բնակատեղիներում հաստատագրված ֆալոսները և պուները կարող էին տեղադրված լինել օջախների (Օշական, Արագած)¹⁰, կարսաների անմիջական հարևանությամբ (Օշական)¹¹, ինչպես նաև կացարանի կենտրոնում (Քեթի)¹² կամ ծիսական անկյուններում (Արագած, Արամուս)¹³:

Օշախ-ֆալոս կապի հնագույն արտացոլումներից են վաղ բրոնզեդարյան բնակավայրերից հայտնի ֆալիկ տարրերով օջախները և դրանց հենակները:

Ֆալոսներ և պուներ հայտնաբերված են նաև ծիսական նշանակության շինություններում (Օշականի թիվ 27, Արագածի թիվ 4 կացարաններ)¹⁴:

Դամբարանային կառույցների վրա տեղադրվում էին ինչպես մենհիրներ (Սիսիան, Ծամիրամ, Եզնագոմեր, Ապարան, Աղթամիր և այլն)¹⁵, այնպես էլ ֆալոսներ կամ պուներ: Վերջիններս կարող էին տեղադրվել դամբարանային կառույցի վրա (Քարաշամբ, Գոգարան, Օշական)¹⁶, ներդրվել կրոնիկայի մեջ (Օշականի թիվ 93 դամբարան)¹⁷, տեղադրվել անմիջապես թաղման ծածկասալերի վրա (Ջազալուի թիվ 16, Օշականի թիվ 67, Այգեշատի թիվ 13 դամբարաններ)¹⁸, լիցքում (Այգեշատի թիվ թիվ 23 դամբարան)¹⁹, մուտքում (Արթիկի թիվ 265 դամբարան)²⁰, թաղման խցում (Կարմիր բլուր, Օշականի թիվ 97, Արթիկի թիվ 223 դամբարաններ)²¹:

Ֆալոսների կերտվածքը: 1) Գլխիկ: Ֆալոսների գլխիկները կարող են լինել գմբեթաձև և կիսակլոր: Սակայն տարբեր հուշարձաններում առկա գմբեթաձև գլխիկներով

⁸ Տե՛ս Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Եր., 1931, էջ 319-320, Ե. Լալայան, Վասպուրական, հավատք, «Ազգագրական հանդես», գիրք XXV, Թիֆլիս 1913, էջ 31, *նույնի* Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Եր. 1931, էջ 201-202:

⁹ Տե՛ս Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 319, Ա. Փիլիպոսյան, Ֆալոսի պաշտամունքը, «Էրոս», 2000, № 1, էջ 11, Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ..., էջ 203-204, Ս. Լիսիցյան, Ջանգեզուրի հայերը, Եր., 1969, էջ 284-287:

¹⁰ Տե՛ս Շ. Ա. Եսայն, Ա. Ա. Կալանտարյան, Օշական I, Եր., 1988, էջ 20-21, Հ. Ավետիսյան, Արագած, Եր., 2001, էջ 15:

¹¹ Տե՛ս Շ. Ա. Եսայն, Ա. Ա. Կալանտարյան, Օշական I, էջ 24:

¹² Տե՛ս Լ. Ա. Պետրոսյան, Раскопки памятников Кети и Воскеаска, Եր., 1989, էջ 28-29:

¹³ Տե՛ս Հ. Ավետիսյան, Արագած, էջ 15, 59-60, Ս. Եսայան, Հ. Ավետիսյան, Արամուսի բնակավայրի միջնաբերդի պեղումները, «ՀՀ-ում 1989-1990 դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գեկուլոցումների թեզիսներ» (այսուհետև՝ Թեզիսներ) Եր., 1991, էջ 61:

¹⁴ Տե՛ս Ս. Ա. Եսայան, Օշականի պալատի պեղումները և տնային պաշտամունքի մի քանի ձևերի մասին, - «Թեզիսներ 1979-80 թթ.», Եր., 1981, էջ 10, Հ. Ավետիսյան, Արագած, էջ 14, 59, աղ. XX 21,22:

¹⁵ Տե՛ս Գ. Թումանյան, Հայաստանի ուշ բրոնզեդարյան դամբարանների կառուցվածքը, ՊԲՀ, 2003, № 1, էջ 177, Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 154-155, Ա. Քալանթարյան, Արագածը պատմության մեջ, Եր., 1935, էջ 61-62: Եզնագոմերի դամբարանադաշտը հայտնաբերվել է 1996 թ. հայկական հուշարձանների համախառն արշավախմբի կողմից (Վ. Գալսերյան, Ա. Գումրի, Գ. Խաչատրյան, Գ. Վարդանյան):

¹⁶ Տե՛ս Գ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 177:

¹⁷ Տե՛ս Շ. Ա. Եսայն, Ա. Ա. Կալանտարյան, Օշական I, էջ 92:

¹⁸ Տե՛ս Աույն տեղը, էջ 87, Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 113-114, Թ. Շ. Խաչատրյան, Древняя культура Ширака, էջ 149, Հ. Ավետիսյան, Այգեշատի դամբարանադաշտի ուսումնասիրությունը, «Բանբեր Երևանի Համալսարանի» (այսուհետև՝ ԲԵՀ), 1996, № 2, էջ 158, 160:

¹⁹ Տե՛ս Հ. Ավետիսյան, Այգեշատի դամբարանադաշտի ուսումնասիրությունը, էջ 158, 160:

²⁰ Տե՛ս Թ. Շ. Խաչատրյան, Древняя культура Ширака, էջ 149:

²¹ Տե՛ս Շ. Ա. Եսայն, Ա. Ա. Կալանտարյան, Օշական I, էջ 93, Ա. Ա. Մարտիրոսյան, Город Тейшебаини, Եր., 1961, էջ 84-85, Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ..., էջ 201, Թ. Շ. Խաչատրյան, Древняя культура Ширака, էջ 149:

ֆալսուներում հաստատագրված է դեպի գագաթ տարբեր կորություն (աղ. 2, ԳՎ. 2-5, 8)²²: Յուրահատուկ տեսրաբերին մոտեցող տեսք ունի Քեթիից հայտնաբերված ֆալստիպ կուռքերից մեկը²³: Ռոշակի առանձնահատկություն ունի Լճաշենից գտնված ֆալստի գլխիկի գագաթը, որը հատված է²⁴ (աղ. 2, ԳՎ. 1): Հաջորդ տիպը ներկայացված է կիսագնդաձև գլխիկով ֆալսուներով (Օշական, Դվին, Մոթթի ձոր, Արթիկ)²⁵: Գլխիկը զատվում էր իրանից վերջինիս հղկման ճանապարհով (աղ. 2, ԳՎ. 1-3, 4, 8), սակայն առանձին դեպքերում քանդակագործը հասնում էր այդ նպատակին ակոսի փորագրման ճանապարհով²⁶: Քեթիից և Հատիճավանքից հայտնաբերված օրինակներում գլխիկը չի զատվում իրանից²⁷:

2) Իրանը: Ճալոսների իրանը կարող է լինել արիզման (շենգավիթյան մշակույթի օջախներ, Քեթիի կուռք (աղ. 1, ԳՎ. 4, 6)²⁸, գլանաձև²⁹, դեպի ներքև լայնացող (ՀՊՊԹ, Օշական, Կարմիր բլուր)³⁰, դեպի գագաթ լայնացող (Արթիկի թիվ 223 դամբարան, Դվին, Մոթթի ձոր, աղ. 1, ԳՎ. 2)³¹, ամշակ (Գլումի)³²: Գլումեշ-թեփեից գտնված ֆալստի իրանը լայնանում է դեպի ներքև, այնուհետև կտրուկ նեղանում: Դեպի ներքև է նեղանում նաև Դվինի ֆալսուր³³:

3) Դրոց: Դրոցները կարող էին լինել ուղղանկյուն զուգահեռանիստի տեսք ունեցող (Օշական, Լճաշեն, Պատաշար, աղ. 2, ԳՎ. 1-2, 8) կամ գլանաձև (Կարմիր Բլուր, Արթիկ) (աղ. 2, ԳՎ. 3)³⁴: Ամենայն հավանականությամբ դրոցի վրա էին տեղադրված նաև Դվինի և Գլումեշ-թեփեի կոթողները:

Հարկ է նաև դիտարկել ֆալսի իմաստ ունեցող մի շարք այլ կոթողներ՝ շենգավիթյան մշակույթի օջախների արիզման, գլանաձև, բրգաձև և կոնաձև հեռակները (Ղարաքյուփեի-թեփե, Գառնի, Շենգավիթ, Օրեշ բլուր, Կարազ Կուրթան և այլն)³⁵, ինչպես նաև կոնաձև, գլանաձև և արիզման պղնձ-կոթողները (Օշական, Արագած, Արամու, աղ. 2, ԳՎ. 6)³⁶:

²² Տե՛ս Կ. Ա. Եսայան, *Скульптура...*, աղ. LIII (1,3-5):

²³ Տե՛ս Լ. Խաչատրյան, *Նորահայտ կուռքեր և կոթողներ Օիրակից*, «Հայաստանի հնագույն մշակույթը», սր. 3, Եր., 2003, էջ 125, տախտ. 1 (9):

²⁴ Տե՛ս Կ. Ա. Եսայան, *Скульптура...*, աղ. LIV (1):

²⁵ Տե՛ս նույն տեղը, աղ. LIII (6,9), Կ. Ս. Խաչատրյան, *Древняя культура Ширака*. ԳՎ. 81, Ե. Լալայան, *ՁՂՎ. աշխ.*, ԳՎ. 93, Կ. Փ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Կ. 2, Եր., 1982, էջ 115, ԳՎ. 88:

²⁶ Տե՛ս Կ. Ա. Եսայան, *Скульптура...*, աղ. LV (1,9):

²⁷ Տե՛ս Լ. Պետրոսյան, *Раскопки...*, ԳՎ. 7, Ն. Խաչատրյան, *Քարե կոթողներ Հատիճավանքից*, «Հայաստանի հնագույն մշակույթը», սր. 3, էջ 119-120:

²⁸ Տե՛ս Կ. Ս. Խաչատրյան, *Древняя культура Ширака*, էջ 71, Կ. Ն. Կոբինսկի, *ՁՂՎ. աշխ.*, աղ. տաբ. XXII (3), Լ. Խաչատրյան, *Նորահայտ կուռքեր...*, էջ 125, տախտ. 1 (9):

²⁹ Տե՛ս Կ. Ա. Եսայան, *Скульптура...*, աղ. LIII (1,3-8), LIV (1,3,5-6), LV, Ա. Ա. Մարտիրոսյան, *Город Тейшебаини*, ԳՎ. 37, Կ. Ա. Եսայան, Ա. Ա. Կалантарյան, *Ошакан I*, աղ. XXXV (9-10):

³⁰ Տե՛ս Կ. Ա. Եսայան, *Скульптура...*, աղ. LIII (2), LIV (2,4):

³¹ Տե՛ս Կ. Ս. Խաչատրյան, *Древняя культура Ширака*, ԳՎ. 81, Ե. Լալայան, *ՁՂՎ. աշխ.*, ԳՎ. 93, Կ. Փ. Ղաֆադարյան, *ՁՂՎ. աշխ.*, ԳՎ. 88:

³² Տե՛ս Ն. Խաչատրյան, *ՁՂՎ. աշխ.*, աղ. 1(4):

³³ Տե՛ս Գ. Իսմաիլով, *Древние поселения междуречья Гуручая и Кенделенчая, Баку*, 1981, ԳՎ. 13, Կ. Փ. Ղաֆադարյան, *ՁՂՎ. աշխ.*, ԳՎ. 88:

³⁴ Տե՛ս Կ. Ա. Եսայան, *Скульптура...*, աղ. LIII (4, 6), LIV (1, 3, 6), LV (4, 8)՝ ուղղանկյուն զուգահեռանիստի տեսք ունեցող դրոցներ, աղ. LIII (7), LIV (2), LV (6)՝ գլանաձև դրոցներ, Ե. Լալայան, *Դամբարանների պեղումներ...*, էջ 114:

³⁵ Տե՛ս Է. Վ. Խանգադարյան, *Գառնի IV*, Եր., 1969, էջ 69, աղ. XVII, XXI (4), *նույնի* Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազ., Եր., 1967, աղ. VII, Բ. Մ. Մունչաև, *Кавказ на заре бронзового века*, М., 1979, ԳՎ. 78 (2), Գ. Ս. Իսմաիլով, *Древние поселения...*, աղ. IV, Ch. Burney, *Eastern Anatolia in Chalcolithic and Early Bronze Age*. AS vol. VIII L. 1958, էջ 190-191, Մ. Gadzhiev, Ph. Wellesley, R. Magomedov, D. Stronach, Sh. Gadzhiev, *Daghestan-American Archaeological Investigation in Daghestan, Russia 1997-1999*. Eurasia Antiqua. Bd. 6. Berlin 2000, էջ 55, pl. 9:

³⁶ Տե՛ս Ս. Եսայան, *Օշականի պալատի պեղումները...* էջ 9, Լ. Ավետիսյան, *Արագած*, էջ 59:

Ֆալանման հուշարձանների ձևավորումը: Ըստ ձևավորման՝ ֆալատիպ հուշարձանները կարելի է բաժանել մի քանի խմբի. 1) առանց զարդանախշի, այդ թվում նաև մեմֆիրները և պուները: 2) Աստրալ՝ մասնավորապես սուլյար պատկերներով՝ խաչեր կամ խաչաձևվող թեք գծեր (Կարմիր բլուր, Լճաշեն, *աղ. 2, նկ. 1,3*)³⁷, սվաստիկա (Օշական, Մեծամորի կուտք)³⁸, արևի տարածվող շողերը մարմնավորող գլխիկի գազաթից դեպի հիմքը տարածվող կանելյուրները (Լճաշեն, Օշական, ՀՊՊԹ-ում պահպանվող մուշ, *աղ. 2, նկ. 2*)³⁹, արևի շարժը երկնակամարում խորհրդանշող գալարվող պարույրները (Լճաշեն)⁴⁰, բեկյալ գծի պատկերը և բազմաշար եռանկյունիները (Լճաշեն, Մրթբի ձոր)⁴¹ (*աղ. 1 նկ. 5*), համակենտրոն շրջաններ (Օշական)⁴²: 3) Ֆալիկ կոթողներին բնորոշ մյուս զարդամոտիվը հրամն օղակող հարթաքանդակ (Կարմիր բլուր, Արևշատ, ՀՊՊԹ-ում պահպանվող մուշ) կամ փորագրված (Լճաշեն) գոտիներն են (*աղ. 2, նկ. 2*)⁴³, որոնք նույնպես ունեն սակրալ իմաստ: Դասելով այն բանից, որ Լճաշենի և Կարմիր բլուրի կոթողներում սուլյար պատկերները ներգծված էին գոտու մեջ՝ վերջինս կարող էր կապված լինել արևի պաշտամունքի հետ, սակայն բացառված չէ, որ գոտիներն ունեն պահպանիչ շրջանի իմաստ: 4) Մարդակերպ ֆալոսներ: Այսպիսի ֆալոսներ հայտնի են Օշականից և Արթիկից (*աղ. 2, նկ. 5*)⁴⁴: Օշականից գտնված կոնքի վրա պատկերված է գլխարկ: Ջուգադերելով նշված կերտվածքները Թեյշեբախի, Աղջակալախի, Լեռնապատի արձանների հետ՝ Ս. Եսայանը թվագրում է դրանք մ.թ.ա. I հազ. սկզբով: Մարդակերպ ֆալոսների այս խմբի հետ իրենց սակրալ նշանակությամբ կարող են համահունչ լինել արդեն հիշատակված տղամարդկանց արձանիկները՝ ընդգծված սեռական հատկանիշներով⁴⁵: 5) Վերջապես պետք է հիշատակել կտեխի պատկերով Գյունեշ-թեփեի կոնքը: Ըստ Ս. Եսայանի՝ կտեխ է պատկերված նաև Մեծամորի մարդակերպ կոնքի վրա⁴⁶:

Ֆալիկ պաշտամունքի հետագա զարգացումը: Ֆալատիպ հուշարձանները գոյատևում են մինչև մ.թ.ա. VI-V դդ.: Նշված ժամանակաշրջանի հուշարձաններում հաստատագրված են պատի մեջ ներդրված ֆալոսների և պուների բեկորներ, ինչը վկայում է ծեսի մարման մասին⁴⁷: Սակայն ֆալիկ պաշտամունքը շարունակվում էր այլ ձևերով՝ ընդգծված ֆալերով արձանիկներ և պատկերներ: Միջնադարում ֆալիկ պաշտամունքի հետ էին կապվում այսպես կոչված «մանչ» խուփերը, որոնք ունեին ֆալաձև բռնակ (Մակարավանք, Գառնի, Անբերդ, Դվին): Ընդամեն, հատկանշական է, որ Անբերդից հայտնաբերված «մանչ» խուփերից մեկը խոյազարդ էր, իսկ մյուսը զարդարված էր բեկյալ և ալիքաձև գծերով⁴⁸: Բացառված չէ, որ դրանք հեթանոսական վերապրուկներ էին, սակայն պետք է հաշվի առնել, որ նոր իրողություններում հին սիմվոլները հաճախ ձեռք էին բերում նոր իմաստ: Ֆալիկ տեսք ունի նաև կարմիր ամթթի քիթը՝ հայտնաբերված Աղավն-1

³⁷ Տե՛ս **С. А. Есаян**, *Скульптура...*, աղ. LIV (1,2), *նույնի* Ереван, Ер., 1969, աղ. 36:

³⁸ Տե՛ս **С. А. Есаян**, *Скульптура...*, էջ 36, է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, էջ 135-137, **С. А. Есаян**, *Амулеты, связанные с культом солнца из Армении. «Советская Археология»* (далее - СА), 1968, № 2, էջ 255-256:

³⁹ Տե՛ս **С. А. Есаян**, *Скульптура...*, էջ 36, աղ. LIV (1,3), **С. А. Есаян**, **А. А. Калантарян**, *Ошакан I*, աղ. XXXV (10):

⁴⁰ Տե՛ս **С. А. Есаян**, *Скульптура...*, աղ. LIV (1), *նույնի* *Амулеты...*, էջ 255-256:

⁴¹ Տե՛ս **Ե. Լալայան**, *Դամբանների պեղումներ...*, էջ 114:

⁴² Տե՛ս **С. А. Есаян**, **А. А. Калантарян**, *Ошакан I*, աղ. XXXV (8):

⁴³ Տե՛ս **С. А. Есаян**, *Скульптура...*, աղ. LIV (1,2,4,5), LV (3):

⁴⁴ Տե՛ս նույն տեղը, աղ. LV (4-6):

⁴⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 37:

⁴⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 51:

⁴⁷ Տե՛ս Ս. Եսայան, *Օշականի պալատի պեղումներ...*, էջ 10:

⁴⁸ Տե՛ս **Կ. Գ. Ղաֆաղարյան**, *Դվին քաղաքը և նրա պեղումները*, հ. 1, Եր., 1952, էջ 197-198, նկ. 175, **Կ. Գ. Ղաֆաղարյան**, **Ա. Ա. Քալանթարյան**, *Դվին II*, *Դվին քաղաքը և նրա պեղումները 1973-1980 թթ.*, Եր., 2002, էջ 87, աղ. XXXVII (6), XXXVIII (4-6), Ս. Վ. Հարությունյան, *Անբերդ*, Եր., 1978, էջ 101-102, նկ. 83, **Г. С. Есаян**, *Материальная культура бассейна реки Агств в развитии средневековье*, Ер., 1992, էջ 142-143, աղ. 43 (14), է. Լ. Պետրոսյան, *Գառնի IX-XIV դդ.*, Եր., 1988, էջ 62, աղ. XXVIII (3,5):

(Եզմագոմեր) բնակավայրից (աղ. 2, Ալ. 9)⁵⁰: Ս. Լիսիցյանը գտնում է, որ ֆալիկ իմաստ ունեին նաև Տաթևի և Վարդուղիի սյուները⁵¹: Պետք է նաև նշել, որ քրիստոնեական ժամանակաշրջանում մեծհիքները հաճախ զարդարվում էին խաչապատկերներով: Հետագայում խաչեր էին փորագրված նաև Ղրղբուլախի ֆալագարդ քարերի վրա⁵²: Այդպիսով, հեթանոսական հուշարձանը փաստորեն մաքրագործվում էր: Ազգագրական նյութը վկայում է պորտաքարերի, ֆալիկ պատկերներով քարերի պաշտամունքի մասին⁵³:

Վերը նշված տվյալների զուգադրումը դիցաբանական և բանահյուսական տվյալների հետ թույլ է տալիս գտնել ֆալունների և այլ ֆալիկ կերտվածքների ու պատկերների մի քանի ծիսական գործառույթ:

Ֆալուն-պտղաբերություն: Անկասկած ֆալիկ կերտվածքների հիմնական նշանակությունը պտղաբերությունն էր, ինչպես նաև առողջ և առատ սերնդի խորհուրդը: Անտիկ աշխարհում ֆալիկ պաշտամունքը սկզբնական շրջանում կապվում էր Հերմեսի, այնուհետև՝ Դիոնիսիոս-Բաքոսի հետ: Ֆալիկ արձանները կրում էին այդ աստծո տոնակատարությունների ժամանակ⁵⁴: Քննելով Խրամ քաղաքի տարածքից գտնված ապիտակ կավից պատրաստված ֆալանակ կերտվածքը՝ Հ. Մարտիրոսյանը նշում է, որ այդ գտածոն հիշեցնում է փոքր կավե ֆալերը, որոնք դրվում էին մրգերի զամբյուղի մեջ Դիոնիսիոսին նվիրված տոնակատարությունների ժամանակ: Հին հույների պատկերացումների համաձայն՝ հողի մեջ թաղված ֆալանման բլիթն ապահովում էր հողի պտղաբերությունը⁵⁵: Դելփիի Ապոլոնի տաճարում էր գտնվում «Օմֆալոս» երկնաքարը: Այն օգտագործվում էր ամենբևե, այսինքն՝ հողի բեղմնավորման ծեսի ժամանակ: Հին Եգիպտոսում ֆալունը խորհրդանշում էր պտղաբերության աստված Միհին: Բացառված չէ, որ պտղաբերության ծեսի հետ է կապված Թեյ Ագրաթից հայտնաբերված դրոցը, որի վրա պատկերված է առյուծներին զսպող մերկ Գիլգամեշը, որի գոտին ենթադրաբար ցորենի հասկն է⁵⁶: Գերմանական դիցաբանության մեջ ֆալունը խորհրդանշում էր պտղաբերության աստված Ֆրեյրին⁵⁶: Ֆալիկ արձանները հողագործական ծեսի հետ կապում է նաև Ս. Բարխուդարյանը⁵⁷:

Պտղաբերության ծեսի հետ են կապված նաև ֆալիկ պատկերներում երևան եկող որոշ կենդանակերպ պատկերներ (արջ, խոյ, ցուլ): Այսպես, Հ. Աճառյանը նշում է, որ հնդեվրոպական «bhel» բառից, որից, ինչպես նշվեց, ծագել է «ֆալոս» բառը, ծագել են բառեր, որոնք որոշ գերմանական լեզուներում նշանակում են «ցուլ»: Ցուլը Դիոնիսիոս-Բաքոսի սրբազան կենդանիներից էր⁵⁸:

Պտղաբերության ծեսի համատեքստում ֆալունը կարող է հանդես գալ նաև որպես արական և իգական սկզբի միասնության տարր: Հատկանշական է, որ մի շարք դեպքերում (Այգեշատ) ֆալանման կոթողները հայտնաբերված են կանանց արձանների

⁵⁰ Պեղումները՝ Ա. Գնունու, Գ. Խաչատրյանի, Գ. Վարդանյանի: Չափագրությունը՝ Ա. Դավթյանի: Նյութերը պահպանվում են Բերձորի երկրագիտական թանգարանում:

⁵¹ Տե՛ս Ս. Լիսիցյան, *նշվ.* աշխ., էջ 286-287:

⁵² Տե՛ս Ե. Լալայան, Դամբանների պեղումներ..., էջ 203, Լ. Ազարյան, Հայկական խաչքարեր, Ս. Էշմիածին, 1973, նվ. 7, Լ. Ա. Дурново, Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979, էջ 114, 132:

⁵³ Տե՛ս Ա. Փիլիպոսյան, *նշվ.* աշխ., էջ 11, Ե. Լալայան, Վասպուրական, էջ 42:

⁵⁴ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ. IV, էջ 474, Բ. Менап, Мифология в древнем и современном искусстве, М.-Минск, 2000, էջ 442:

⁵⁵ Տե՛ս Ա. А. Мартиросян, Город Тейшебаини, էջ 86, *Эпохи* Идолы из раскопок Кармир блура, ՊԲՀ, 1958, № 2, էջ 129-130, Ե. Լալայան, Դամբանների պեղումներ..., էջ 78:

⁵⁶ Տե՛ս Н. Д. Флинтнер, Культура и искусство Двуречья, Л.-М., 1958, էջ 72-74, 123-125, 157:

⁵⁷ Տե՛ս М. И. Стеблин-Каменский, Миф, Л., 1976, էջ 77:

⁵⁸ Տե՛ս Ս. Բարխուդարյան, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Եր., 1935, էջ 40:

⁵⁹ Տե՛ս З. П. Соколова, Культ животных в религиях, М., 1971, էջ 83-85, Է. Վ. Խանգաղյան, Խոյի պաշտամունքը, «Հին Հայաստանի մշակույթը», ար. XII, Եր., 2002, էջ 3-4, Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ. IV, էջ 474, Բ. Менап, Мифология..., էջ 450-451:

կողքին⁶⁰: Ե. Լալայանը նշում է, որ հաճախ ֆալանսման քարերի հարևանությամբ գտնվում են անցքով քարեր, որոնք կապվում են կտեխի պաշտամունքի հետ⁶¹: Բացի այդ, ինչպես վերը նշվեց, մի շարք ֆալիկ կերտվածքներում պատկերված է կտեխի: Այս առնչությամբ պետք է հիշատակել Թեփե Գավրայից հայտնաբերված կնիքը, որի վրա պատկերված է զոհասեղանի վրա կատարվող սեռական ակտ⁶²: Անտիկ աշխարհում կոնաձև ֆալանսման պլուներ ձոնվում էին Արտեմիսին, Էրոսին, Վեներային: Հնդկական դիցաբանությունում Ծիվան պաշտվում էր ինչպես ֆալոսի (լինգամ), այնպես էլ կտեխի (յոնի) տեսքով⁶³: Ֆալիկ արձաններ էին ձոնվում հին եգիպտական սիրո աստվածուհի Խատհորիին⁶⁴: Պտղաբերության ծեսի հետ էին կապված նաև հին հունական միստերիաները՝ նվիրված Դեմետրեի աստվածուհուն⁶⁵: Ըստ շումերական արարողակարգի՝ սովորաբար մերկ էին պատկերվում պտղաբերության աստվածուհի Ինանա-Իշթարի քոմերը⁶⁶: Հայոց մեջ համարվում էր, որ պրոստաբարեճ ի վիճակի էին բուժել չբեր կանանց: Ըստ հայկական ավանդության՝ Սիսիանի Լեռնաշեն գյուղի մոտ գտնվող «Ցիցքարից» բխող աղբյուրում լվացվելը ավելացնում էր կերակրող կանանց կաթը⁶⁷: Ընդամին, պետք է նշել, որ ջուրը դիցաբանության մեջ կնոջ սիմվոլ է:

Հ. Մարտիրոսյանը և Ս. Եսայանը նշում են, որ պտղաբերության ծեսի համատեքստում ֆալոսները և ֆալիկ հուշարձանները դամբարանային համալիրներում կարող էին ընկալվել որպես վերածննդի, տոհմի շարունակելիության խորհրդանիշ⁶⁸: Այս վարկածի ապացույց կարելի է համարել իրար ձեռք բռնած տղամարդու և կնոջ հարթաքանդակ պատկերները Դվինի հեթանոսական դամբարաններում⁶⁹: Այս ենթատեքստում է դիտարկվում նաև Բաքոսի պաշտամունքի կապը Պրոզերպիանի պաշտամունքի հետ: Բաքոսը սպանվել էր տիտանների հետ պայքարում, սակայն հետագայում վերակենդանացվել էր Դեմետրե-Ցեբերայի կողմից⁷⁰: Այս իմաստով է ֆալոսը հիշատակվում նաև հայկական Էպոսում⁷¹:

Ֆալոս-Արև: Պտղաբերության խորհուրդն ունեն նաև ֆալոսների վրա փորագրված սուլյար պատկերները՝ խորհրդանշելով հողի բեղմնավորումը արևի շողերով: Ինչպես նշվեց, Դվինում հայտնաբերված կարասի վրա պատկերված է անտրոպոմորֆ ֆալիկ կերպար՝ ուսերից տարածվող արևի շողերով: Սուլյար իմաստ և պտղաբերության ծեսի հետ առնչություններ կարող է ունենալ նաև առյուծագլուխ էակի ֆալիկ պատկերը: Այս պլուսի հետ համահունչ է Օիրակավանի հ. 48 դամբարանի կոմպոզիցիան, որը բաղկացած էր նիզակավոր զինվորի՝ ֆալիկ և առյուծի արձաններից: Ենթադրվում է, որ պատկերված է արևի աստվածը իր սրբազան կենդանու ուղեկցությամբ: Ֆալոս-Արև կապի մասին են վկայում նաև սուլյար տարրերը ֆալիկ արձանների վրա⁷²: Բննելով Գեղամա լեռան ժայռապատկերները՝ Հ. Մարտիրոսյանը և Հ. Իսրայելյանը առանձնացնում են մի խումբ պատկերներ՝ դեպի վեր բարձրացրած ձեռքերով և արևի շողերի նման չլված

⁶⁰ Տե՛ս Հ. Ավետիսյան, Այգեշատի դամբարանադաշտի ուսումնասիրությունը, էջ 156:

⁶¹ Տե՛ս Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ..., էջ 204:

⁶² Տե՛ս Ե. Вардиман, նշվ. աշխ., էջ 251:

⁶³ Տե՛ս Э. Тейлор, Первобытное общество, М., 1989, էջ 344, "Мифы народов мира", т. 2, М., 1982, էջ 56:

⁶⁴ Տե՛ս Ա. Փիլիպոսյան, նշվ. աշխ., էջ 10:

⁶⁵ Տե՛ս Ջ. Ֆրեյզեր, Ոսկե ճյուղը, Եր., 1989, էջ 170-178, С. А. Токарев, Ранние формы религии, М., 1990, էջ 363, Е. Вардиман, Женщина в древнем мире, М., 1990, էջ 40, 51-54:

⁶⁶ Տե՛ս С. Ллойд, Археология Месопотамии, М., 1984, էջ 63, Н. Д. Флянтнер, նշվ. աշխ., էջ 82-84:

⁶⁷ Տե՛ս Ս. Լիսիցյան, Ջանգեղուրի հայերը, Եր., 1969, տախտ. СХVIII, էջ 284-285, Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 56:

⁶⁸ Տե՛ս А. А. Мартиросян, Город Тейшебаини, էջ 85, С. А. Есаян, Скульптура..., էջ 37:

⁶⁹ Տե՛ս Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը..., հ. 2, էջ 116, նկ. 90:

⁷⁰ Տե՛ս Р. Менар, Мифология..., էջ 519:

⁷¹ Տե՛ս Ս. վրդ. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 27:

⁷² Տե՛ս Ռ. Մ. Թորոսյան, Օ. Ս. Խնկիկյան, Լ. Ա. Պետրոսյան, Հին Օիրակավան, աղ. XXIV (1), Ս. Դեմեչյան, նշվ. աշխ., էջ 112:

մատներով: Դրանք հաճախ ուղեկցվում են սվաստիկայի պատկերով: Նշված պատկերները ևս ֆալիկ են⁷²:

Ֆալուք որպես պահպանիչ: Ֆալունները, սյուն-կոթողները բնակարանային համալիրներում տեղադրված լինելով օջախների և կարասների ամփոփական հարևանությամբ, կրում էին ընտանիքի բարօրության խորհուրդը⁷³: Նորվեգիայում հավաքում էին կլոր քարեր, լվանում դրանք, կարագ քսում և դնում էին կրակի դիմաց՝ թարմ ծղոտի վրա: Է. Թայլորի ենթադրությամբ, այդօրինակ քարերի պաշտամունքը կապ ունի Տորի պաշտամունքի հետ: Այսպես կոչված «Հարթ կղզու ձեռագիր» XIV դ. շվեդական գրական հուշարձանում հիշատակվում է, թե ինչպես Ս. Օլաֆը ականատես էր եղել ձիու չորացրած սեռական օրգան ներկայացնող «Վլոլսի» կոչվող առարկայի երկրպագությանը⁷⁴: Վերը նշված օրինակները ցույց են տալիս, որ ֆալուն-պտղաբերություն համատեքստում կարելի է դիտարկել նաև ֆալուսի պահպանիչ գործառույթը: Մինչև XX դ. սկիզբը արևմտահայերը (թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ) կրծքին կրում էին «խիար» կոչվող ֆալանման զարդ⁷⁵: Ըստ Ե. Լալայանի և Թ. Խաչատրյանի՝ թաղումային հուշարձաններում ֆալունները կարող էին խաղալ պահպանիչ դեր⁷⁶: Այս վարկածի հաստատումը կարելի է համարել կրոնիստի մեջ ֆալունների ներդրումը Օշականի դամբարաններից մեկում:

Ֆալուն-կրակ-օջախ: Ֆալուն-կրակ կապի մասին են վկայում օջախների ֆալան նշանները և ֆալիկ տղամարդկանց պատկերող հեմակները, որոնք, ըստ Ս. Եսայանի և Տ. Չուբինիշվիլու, պատկերում էին օջախը բեղմնավորող տղամարդուն⁷⁷: Ֆալուսի կապը կրակի պաշտամունքի հետ երևում է Ռիզվեդայում, որտեղ շփման միջոցով կրակ ստանալը համեմատվում է բեղմնավորման հետ (Ռվ III, 29, 1): Հին Հնդկաստանում կրակի աստծո պաշտամունքի հետ էր կապվում առողջ սերնդի ծնունդը (Ռվ I, 66, 8, 71, 5, 97, 4, II, 9, 5, Ավ XIV, 2, 1)⁷⁸: Ֆալուսի (լինգամի) տեսքով էր պաշտվում նաև Ռուդրա-Օիվան, որի բազմաթիվ գործառույթներից էր սերնդի պարգևումը (Ռվ II, 33, 2): Օիվայի լինգամը ևս հրեղեն էր⁷⁹: Հունական դիցաբանությունում Ապոլլոնին էին ձուլվում քարերը: Բացի այդ՝ նա օգնում էր ծննդաբերող կանանց⁸⁰: Հայոց մեջ պահպանվել է օջախի պսակադրության սովորությունը⁸¹: Մ.թ.ա. IV-III դդ. Էտրուսկյան դամբարանի որմնամկարներից մեկի վրա պատկերված է ֆալագարդ վառարան⁸²:

Ֆալուն - հանդերձյալ աշխարհ - նախնիների պաշտամունք: Հնդկական առասպելաբանության համաձայն՝ Ազնին բուծում է բրահմանի անեծքի հետևանքով կրտված Ինդրային, նախնիների ոգիների օգնությամբ փոխարինելով այն, ինչից զրկվել էր աստվածը, խոյնով⁸³: Ֆալուն էր խորհրդանշում մեռնող և հարություն առնող աստված Օսիրիսը: Սոֆոկլեսը նշում է, որ միայն այն մարդը, որը մասնակցել է սրբազան միստերիային, «կարող է արժանանալ հավերժական կյանքի Հադեսում, զգալ կյանքի ավարտը և

⁷² Տե՛ս Հ. Մարտիրոսյան, Հ. Խարայեղյան, նշվ. աշխ., էջ 50-51, նվ. 312, 317, 321-322:

⁷³ Տե՛ս Ս. Ա. Եսայան, Օշականի պալատի պեղումներ..., էջ 10:

⁷⁴ Տե՛ս Э. Тейлор, Первобытное общество, էջ 342-343, М. И. Стеблин-Каменский, նշվ. աշխ., էջ 77:

⁷⁵ Տե՛ս Ե. Լալայան, Դամբանների պեղումներ, էջ 207:

⁷⁶ Տե՛ս Ե. Լալայան, Դամբանների պեղումներ, էջ 202, Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, էջ 150:

⁷⁷ Տե՛ս Т. Н. Чубинишвили, նշվ. աշխ., էջ 63, Ս. Եսայան, Հայաստանի հնագիտությունը, Եր., 1992, էջ 160:

⁷⁸ Տե՛ս "Ригведа. Мандалы I-IV", М., 1985, "Ригведа. Избранные гимны", М., 1972, "Атхарваведа. Избранные гимны", М., 1974: Այսուհետ հղումները Ռիզվեդայից և Աթհարվավեդայից կորվեն տեքստում:

⁷⁹ Տե՛ս "Словарь мифов", М., 2001, էջ 374:

⁸⁰ Տե՛ս Калимах. К Аполлону 45, Гомеровские гимны. К Аполлону. 360, - в кн.: "Античные гимны". М., 1988:

⁸¹ Տե՛ս Դ. Վարդումյան, Հայոց ժողովրդական բնակարանը (գլխատում) սրբարան, «Հայոց արքերը և սրբավայրերը», Եր., 2002, էջ 359, Ե. Լալայան, Վասպուրական, էջ 51:

⁸² Տե՛ս А. Наговицын, Этруски, М., 2000, էջ 188:

⁸³ Տե՛ս Э. Н. Темкин, В. Г. Эрман, Мифы древней Индии, М., 1989, էջ 80:

նոր կյանքի սկիզբը»⁶⁴: Գիզամեշը նույնպես կապված էր հանդերձյալ աշխարհի հետ՝ հանդիսանալով անորաշխարհի թագավորներից մեկը: Ֆալոսի կապը տղամարդ նախահոր պաշտամունքի հետ ակնարկում է նաև Ս. Բարխուդարյանը⁶⁵: Հանդերձյալ աշխարհի հետ կապված էր նաև Ֆրեյր աստծո պաշտամունքը: Այդ աստվածն էր հանդերձյալ աշխարհից բերել կապանքները, որոնցով շղթայված էր այն Գայլը, որը պետք է ոչնչացներ աշխարհը⁶⁶: Ինչպես նշվեց, Էտրուսկյան ֆալագարդ վառարանի պատկերները հաստատագրված են դամբարանային կառույցում: Ըստ Խ. Սամուելյանի՝ մենհիրները պետք է ընկալվեն որպես նախնիների ոգիների բնակեցման վայր⁶⁷: Մենհիրների՝ որպես ոգիների բնակեցման վայր են ընկալում նաև կելտական և գերմանական դիցաբանությունում միաժամանակ կատարելով մարդկանց աշխարհից ոգիների աշխարհ տեղափոխողի գործառույթ⁶⁸: Սակայն Ա. Սմիռնովը կարծում է, որ մենհիրների՝ նման գործառույթները հետագա դարաշրջանում դրանց ծիսական նշանակության վերաիմաստավորման արդյունք են⁶⁹: Հետաքրքիր է, որ գյումրեցիների նախնիներին վկայակոչող երդման բանաձևում հիշատակվում է ֆալոսը⁷⁰:

Ֆալոս-զոհաբերություն: Հայաստանի հնագիտական նյութում ֆալոս-զոհաբերություն կապի արտահայտումն է «Պաշտվող եզան դամբարանից» հայտնաբերված ֆալանման ծխամանը: Ֆալիկ պաշտամունքի կապը զոհաբերության հետ արտացոլվում է նաև դիցաբանության մեջ: Ջոհաբերության հետ է կապվում Ռուդրա-Օիվայի կերպարը: Հատկանշական է, որ, երբ ըստ Պաղմա Պուրանայի բրահմանների անեծքի հետևանքով Օիվան կրտվեց, երկրում դադարեցին զոհաբերությունները⁷¹: Հարկ է նաև նշել, որ Աթհարվափեդայում ֆալոսը նույնացվում էր Սոմայի և Բրահմանասպատիի հետ, որոնց պաշտամունքը կապվում է զոհաբերության արարողության հետ (Ավ IV 4,6): Ֆալոս-զոհ կապը կարելի է դիտարկել նաև Ռիգվեդայի այլ հիմներում (Ռվ V, 58, 5): Ջոհաբերության արարողության հետ կարելի է կապել նաև Լոոի-Բերդի շերտերը⁷²:

Ֆալիկ հուշարձանների կոսմոգոնիկ իմաստը: Կոսմոգոնիկ իմաստով ֆալոսի պաշտամունքը կարող էր կապված լինել աշխարհաստեղծման, աշխարհի բնականոն զարգացման հետ: Օիվայի կրտման մասին արդեն հիշատակված առասպելում նշվում է, որ անեծքի հետևանքով լույսը խավարեց, արևը չէր տաքացնում, տարվա ժամանակների հաջորդականությունը խախտվեց: Օիվայի իրական պատկերը Տիեզերքի կործանողի պատկերն էր: Ըստ մեկ այլ առասպելի՝ Բրահմայի և Վիշնուի վեճի ժամանակ, թե ով է ավելի մեծ արարիչ, Օիվան հանում է իր բոցե լինգամը: Ցանկանալով տեսնել նրա սկիզբն ու վերջը՝ Բրահման սագի կերպարանքով բարձրանում է երկինք, իսկ Վիշնուն վարագի կերպարանքով մտնում է գետնի տակ, բայց այդպես էլ չեն գտնում ոչ սկիզբը, ոչ վերջը՝ ճանաչելով Օիվային մեծագույն արարիչ⁷³: Կոսմոգոնիկ իմաստ կարող էր ունենալ նաև սրբազան ամուսնության ծեսը՝ նշանավորելով տիեզերական կարգ ու կանոնը⁷⁴:

Ֆալոսի մարդակերպացումը: Անտրոպոմորֆ ֆալոսների ի հայտ գալը խորհրդանշում է իր մեջ ֆալիկ պաշտամունքի տարրերը միավորող անտրոպոմորֆ աստծո ձևավորումը: Դա կապվում էր առաջնորդ-թագավորի դերի բարձրացման հետ, որն աստվածացվելով՝ այլևս ընկալվում էր որպես իր ժողովրդի հայր և երկրի բարգավաճման գլխավոր

⁶⁴ Տե՛ս Է. Вардиман, նշվ աշխ., էջ 55:

⁶⁵ Տե՛ս Ս. Բարխուդարյան, նշվ. աշխ., էջ 40:

⁶⁶ Տե՛ս "Младшая Эдда", Լ., 1970, "Видение Гюльви", էջ 50, 91:

⁶⁷ Տե՛ս Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 154, 317:

⁶⁸ Տե՛ս "Ирландские саги", М.-Л., 1961, էջ 105, 131, "Сага об Инглингах. XII", - В кн.: С. Стурлусон, Круг Замной, М., 1980:

⁶⁹ Տե՛ս А. А. Смирнов, Комментарий 4 к саге Болезнь Кухулина. - В кн.: "Ирландские саги", էջ 287:

⁷⁰ Տե՛ս Ե. Լալայան, Դամբանների պեղումներ..., էջ 204:

⁷¹ Տե՛ս Э. Н. Темкин, В. Г. Эрман, նշվ. աշխ., էջ 49:

⁷² Տե՛ս Ս. Դևեջյան, Բրմի դամբարանը, էջ 310:


⁷³ Տե՛ս "Словарь мифов", էջ 374:

⁷⁴ Տե՛ս "История первобытного общества. Эпоха классового образования", т. 3, էջ 441:

գրավական: Կարելի է համաձայնվել Մ. Ստեբլին-Կամենսկու այն ենթադրության հետ, որ աստվածայնությունը ենթադրում է տվյալ էակի սեռական գերզորությունը²⁶: Այդպիսի սեռական գերզորությունը բնորոշ էր Օդինին, Ջևսին, Ինդրային²⁶:


Այսպիսով, ֆալոսները, ֆալանան հուշարձանները և ֆալիկ պատկերները բնականաբար, դամբարաններում, լինելով պտղաբերության խորհրդանիշ, զուգահեռաբար ունեն հասն մի շարք այլ ծիսական գործառույթներ: Նրանք կարող էին, ա) հանդես գալ որպես պահպանիչ՝ ապահովելով տվյալ ընտանիքի բարորությունը, առողջ սերունդը, առատ բերքը, բ) կապված լինել նախնիների և տղամարդ նախահոր պաշտամունքի հետ, գ) խորհրդանշել զոհն ու զոհաբերությունը, դ) մարմնավորել կրակը, ընտանեկան օջախը, ե) խորհրդանշել տիեզերական կարգ ու կանոնը, զ) մարմնավորել արքա-առաջնորդին, որն ընկալվում էր որպես իր ժողովրդի հայր և երկրի բարորության գլխավոր գրավական: Բնականաբար, կախված հուշարձանի տեղադրման վայրից կամ պատկերի կոմպոզիցիայից՝ գերակշռող է դառնում այս կամ այն գործառույթը:

Աղ. 1



1. Քարե ֆալոս կաննիտրազարդ գլխիկով, 2. քարե ֆալոս կարմիր բլուրից (ըստ Հ. Մարտիրոսյանի), 3. տուֆ ֆալոս սկաստիկայի պատկերով Օջակից (ըստ Ս. Եսայանի և Ա. Քալանթարյանի), 4. մարդակերպ ֆալոս (ըստ Ս. Եսայանի), 5. սյուն-կոնքեր Արգաճից (ըստ Հ. Ավետիսյանի), 6. ֆալոսի պատկեր ժայռի վրա Արտամես (ըստ Ե. Լալայանի), 7. տուֆ ֆալոս Օջակից (ըստ Ս. Եսայանի և Ա. Քալանթարյանի), 8. անոթի ֆալանե թիթ Աղավնո-Իրնակավայրից (չափաբերությունը՝ Ա. Դավթյանի):

Աղ. 2



1. Ֆալիկ արձանիկ Ըրիտից (ըստ Ա. Պարոտի), 2. կավե ֆալիկ արձան Օնեգավիթից (ըստ Ս. Մարտիրոսյանի), 3. ծխաման - Պաշտվող եզան դամբարանից՝ (ըստ Ե. Լալայանի), 4. օջախի արիզման հեծակ Հառիճից (ըստ Ս. Խաչատրյանի), 5. օջախի ֆալանե նկուտ Հառիճից, 6. օջախի պատան հեծակ Մոխրաբլուրից (ըստ Ս. Եսայանի), 7. ֆալանե նկուտներով օջախ կարագից (ըստ Հ. Քոչարյանի), 8. զինվորի ֆալիկ արձանիկ Պառավաբարից (ըստ Ս. Եսայանի), 9. դիմակով անձի ֆալիկ պատկեր Պառավաբարից (ըստ Ս. Եսայանի):

А. В. ГYНИ - Типы и культовые функции фаллических изваяний Армянско-го нагорья. - Предлагаемая статья посвящена почитанию фаллических памятников и вопросам фаллического культа в древнейшей и древней Армении. Рассматриваются различные типы фаллических памятников (фаллосы, менгиры, столбики), а также са-туэтки, очаги, очажные подставки с фаллическими элементами. На основании данных мифологии, этнографии, фольклора выделяются несколько культовых функций фал-лических памятников: культ плодородия, огня, Солнца, культ предков. В космогони-ческом смысле фаллос символизировал вселенский порядок. В последующем фал-лос мог символизировать вождя-государя, который воспринимался как отец своего народа, гарант благоденствия страны.

²⁶ Տե՛ս Մ. И. Стеблин-Каменский, *ԱԶԿ. աշխ.*, էջ 79-80:
²⁶ Տե՛ս "Старшая Эдда", СПб., 2000, "Песнь о Харбарде", 16, 20, 30, Э. Н. Темкин, В. Г. Эрман, *ԱԶԿ. աշխ.*, էջ 78-80: